ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ

Միջնակարգ դպրոցների վարչություն

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 8-րդ, 9-րդ ՑԵՎ 10-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

891.9909
Հ-28

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

-6 NOV 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Միջնակարգ դպրոցների վարչություն

891.99.09
Հ-28

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 8-րդ, 9-րդ ՅԵՎ 10-րդ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3958

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

06 JUN 2013

64-193

Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ում ԿԳՊ
Ի. Կ. Ա
ՄՐՋԱՆԻՇՅԱՆ ՍՆՏ.
20425-59

ՆԵՐԱԾԱԿԱՆ

8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների ծրագիրը կազմելիս մենք պաշտպանել ենք այն սկզբունքը, որ խորհրդային միջնակարգ դպրոց ավարտած յերիտասարդը պետք է գիտենա հայոց գրականության պատմությունն առնվազը նրա զարգացման հիմնական ետապներով։ Ցելնելով ահա այդ սկզբունքից ծրագիրն այնպես ենք կառուցել, որ պատմական հաջորդականությամբ 8-րդ և 9-րդ դասարաններում ավանդվի ամբողջ հայոց գրականության պատմությունն իր հիմնական ետապներով (հին գրականություն, ժողովրդական բանահյուսություն, միջնադարյան տաղերգուներ, աշուղական գրականություն և նորագույն գրականություն)։ Թե խորհրդային հայոց գրականությունը, թե մեր յեղբայրական ժողովուրդների գրականության նմուշները և թե համաշխարհային գրականության գագաթները (Հոմերոս, Շեքսպիր և այլն) անցնում են 10-րդ դասարանում։

Ներկա ծրագրում ուղղված է այն սխալը, որը որպես կանոն իշխում եր մինչև այժմ հրատարակված գրականության դասագրքերում և ծրագրերում հայոց գրականությունը մեխանիկորեն, միանգամայն անհիմն կերպով, արևելահայ և արևմտահայ առանձին-առանձին գրականությունների բաժանելը։ Ցելնելով այդ սխալ դիրքից արևմտահայ գրականությունը անցնում ելին միայն 9-րդ դասարանում։ Մենք ունենք մի ընդհանուր գրականություն և այդ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներն այս ծրագրում ներկայացված են պատմական հաջորդականությամբ։

Ծրագիրը կազմված է այն սկզբունքով, որ մեր միջնակարգ դպրոցն ավարտած յերիտասարդը վոչ միայն պետք է իմանա հեղինակներին և նրանց գլխավոր գործերը, այլ և կարողանա վերլուծել նրանց յերկերը, վորոշել այդ յերկերի գե-

գարվեստական ու հասարակական արժանիքները։ Դրա համար, ամեն մի նշանավոր գրողի կապակցությամբ սիստեմատիկ կերպով լուսաբանվում են նաև մի շարք գրականագիտական-տեսական հարցեր, որինակ գրական վոճերը՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, կամ պոեմիկա—ֆաբուլա, սյուժետ, կոմպոզիցիա, գրական տեսակներ, ժանրեր և այլն։ Կոնկրետ նյութերի մշակման հիման վրա պետք է աշակերտության համար պարզաբանել թե վոնրն է գեղարվեստական գրականության սպեցիֆիկումը, ինչ է պատկերը (образ), ինչ է իդեան, ինչպիսի փոխհարաբերության մեջ են ձևը և բովանդակությունը։

Ինչպես մյուս գիտությունները, նույնպես և գրականագիտությունը կուսակցական գիտություն է։ Անհրաժեշտ է, վոր դասատուն ինքը ծանոթ լինի մարքսիզմի կլասիկների՝ Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի գրականագիտական ուսմունքին և ամեն մի պրոբլեմի լուծումը տա մարքսիստական գրականագիտական սկզբունքով հիմնավորված։ Դասատուն գրականագիտական հարցերը լուսաբանելիս միաժամանակ պետք է մերկացնի այդ հարցերի հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական-բուխարինյան կեղծ մեկնաբանությունները։ Դասատուն գրականագիտական հարցերի լուսաբանման համար անպայման պետք է ոգտվի հեղափոխական դեմոկրատական մեծ գրականագետներից (Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Նալբանդյան և այլն)։

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ա. մաս

1. Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի ուսմունքը գեղարվեստական գրականության մասին։ Գեղարվեստական գրականությունը դա գաղափարախոսություն է արտահայտված պատկերների միջոցով։

Լուսաբանել, թե գեղարվեստական գրականությունը վորպես գաղափարախոսություն ինչպիսի հսկայական դեր է խաղացել ու խաղում է հասարակական կյանքում, մասսաներն այս կամ այն դասակարգի իդեոլոգիայով դաստիարակելու գործում։ Բացատրել ընկեր Ստալինի բնորոշումը թե «Գրողը մարդկային հոգու ճարտարապետն է»։ Ղեկավարվելով մարքսիզմի կլասիկների գրականագիտական ուսմունքով, ոգտագործելով Մարքսի, Ենգելսի Լենինի, Ստալինի տված գնահատականներն առանձին գրողների (Հոմերոս, Շեքսպիր, Գյոթե, Բայրոն, Տոլստոյ, Չեխով, Գորկի, Մայակովսկի և այլն) դասատուն պետք է մերկացնի գրականության պատմության և առանձին գրողների հակամարքսիստական-հակալենինյան վուլգար սոցիոլոգիական մեկնաբանությունները։

Դասատուն պետք է կոնկրետ փաստերի հիման վրա մերկացնի գրականության պատմության հակահեղափոխական տրոցկիստական ու նացիոնալիստական աղավաղումները, թե ինչպես նացիոնալիստները-տրոցկիստները գրականության պատմությունն ընդհանրապես և առանձին գրողների գրական ժառանգությունը մասնավորապես ոգտագործել են և ոգտագործում են հակախորհրդային պրոպագանդայի համար։ Լուսաբանել Լենին-Ստալինի ուսմունքը կուլտուրական ժառանգության և մասնավորապես գրականության մասին՝ քննադատորեն վերամշա-

կել և կոմունիզմի համար մղվող պայքարում այն ոգտագործել։

2. Համառոտ կերպով բացատրել գեղարվեստական գրականության առաջացումը։ Ցույց տալ, վոր գրավոր գեղարվեստական գրականությունից դեռ շատ առաջ ժողովուրդներն ունեցել են իրենց հարուստ բանահյուսությունը (2 ժամ)։

3. Ակնարկ հայ հին գրականության վրա։ Թվել այն անունները, վորոնք մտնում են հայ հին գրականության պատմության մեջ 4—11-րդ դարերում (Ագաթանգեղոս, Բյուզանդացի, Փարպեցի, Ցեղիշե, Խորենացի, Շնորհալի, Նարեկացի և և այլն)։

Պարզաբանել, վոր այդ պատմագիր հեղինակները, չնայած իրենց կղերա-ֆեոդալական աշխարհայացքին, մեզ համար պատմական մեծ արժեք են ներկայացնում, վորովհետև նրանց գրվածքների միջոցով հնարավոր է դառնում մոտավոր պատկերացում ունենալ մեր ժողովրդի անցյալ կյանքի վորոշ կողմերի վերաբերյալ։

Դասատուն պետք է առանձնապես կանգ առնի հայոց հին գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերության վրա ոգտագործելով Խորենացու գրական ժառանգությունը։

Ցույց տալ, թե ինչպես է Մովսես Խորենացին ոգտագործել հայ հին ժողովրդական բանահյուսությունը։ Պետք է նշել հետևյալ առասպելները և դիցաբանությունները. «Հայկ և Բել», «Արա և Շամիրամ», «Արտավազդ» և «Վահագնի ծնունդը»։ (4 ժամ)

4. Ժողովրդական եպոս։ Ծանոթություն ժողովրդական եպոսի մասին։ Հայկական ժողովրդական եպոսը։ «Սասնա ծռեր»։ Մատնանշել «Սասնա ծռերի» ստեղծման մոտավոր շրջանը (11—13 դար)։ «Սասնա ծռերը» վորպես ժողովրդական լայն խավերի ազատագրական տենչերի արտահայտություն։ Սասունցի Դավիթը—ժողովրդական հերոս։ Ցույց տալ թե ինչպես է պատկերված ժողովրդի պայքարն ոտար ու հայրենի բռնակալների դեմ։

«Սասնա ծռերը» վերլուծելիս կանգ առնել յերկի կառուցվածքի, տիպերի հոգեբանական կերտվածքի, պատկերավոր արտահայտությունների, լեզվի ճոխության վրա և ցույց տալ, թե սոցիալական հարաբերությունները վորքան պատմական ճշմարտությամբ արտացոլվել են նրանում։

Մերկացնել հակագիտական, բուրժուա-ազգայնական այն տեսակետը, վորի համաձայն իբր թե «Սասնա ծռերը» ֆեոդալական ստեղծագործություն է, և ժողովուրդը հետագայում է այն փոխառել։ Հանգամանորեն ցույց տալ, վոր «Սասնա ծռերի» հերոսների վարքագծի պատկերումը, նրանում արտահայտված հասարակական ձգտումները և յերկի լեզուն ցույց են տալիս, վոր միայն ժողովուրդն եր կարող մի այդպիսի հոյակապ գործ ստեղծել։

Ակնարկ «Սասնա ծռերի» վարիանտների մասին։

«Սասնա ծռերը» համաշխարհային գրականության լավագույն արձաններից մեկը։ (4 ժամ)

Բ. մաս

1. Միջնադարյան աշխարհիկ բանաստեղծներ։ Համառոտ կերպով պարզաբանել միջնադարյան աշխարհիկ գրականության առաջացման սոցիալական պատճառները։ Միջնադարյան աշխարհիկ գրականությունը վորպես հակադրություն կղերա-ֆեոդալական միստիկական գրականության (Ն. Շնորհալի, Նարեկացի և այլն)։

2. ՖՐԻԿ։ Տեղեկություններ բանաստեղծի կյանքի մասին։ Ֆրիկը միջնադարյան դեմոկրատական տաղանդավոր բանաստեղծ։ Ֆրիկը բացառիկ յերևույթ միջնադարյան համաշխարհային գրականության մեջ։ Ֆրիկի բուռն բողոքը սոցիալական անհավասարության դեմ։ Աթեիզմի տարրերը Ֆրիկի ստեղծագործություններում։ Ցույց տալ, թե ինչպես է Ֆրիկը քննադատում «աստծուն»։ Պարզաբանել Ֆրիկի գրական վոճի քննադատական հագեցվածությունը։ Ֆրիկի ճոխ ու պատկերավոր լեզուն։ Ֆրիկի տաղաչափությունը։ (4 ժամ)

Նյութեր

1. Գանդատ
2. Ընդդեմ ֆալաքին

3. Վերլուծել միջնադարյան մյուս հետևյալ բանաստեղծների յերկերը՝ Կոստանդին Յերզնկացի՝ «Տաղ գարնան», Մկրտիչ Նաղաշ՝ «Վասն ագահության», Գրիգոր Խթամարցի՝ «Արի, յել այգվույս» և «Տաղ վասն վարդի», Նահապետ Քուչակ՝ «Քառյակներ»։ Նշել հիշած հեղինակների ստեղծագործության աշ-

խարհիկ մոտիվները, նրանց սերը դեպի գարունը, ծաղիկը, կինը, յերգը, գինին։ Ընդգծել նրանց լեզվի ճոխությունը, պատկերավորությունը։ (4 ժամ)

4. Առակներ։ ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ։ Կենսագրական տեղեկություններ։ Հայկական առակը միջին դարերում։ Այգեկցու առակները հոգեվորականության, հարուստների, շահամոլների և տգեղների դեմ։ (2 ժամ)

Վերլուծել Այգեկցու հետևյալ առակները.

1. Գող քահանա և այրի
2. Այրի և կովն...
3. Յեղն ու ձի
4. Գայլ ու ագռավ...
5. Առյուծ և մարդ
6. Ձկնորս, գայլ և...
7. Գայլ և եշ
8. Միամիտ գողք
9. Արծաթասեր այր
10. Կաթ մեղու...

Այգեկցու բնութագիրը

գ. մաս

Աշուղական գրականություն։

Համառոտ ակնարկ աշուղական գրականության, ցույց տալով գլխավորապես նրա ծագումը, ժողովրդական բնույթը և ունեցած ազդեցությունը ընդհանուր գրականության վրա։

1. ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ։

Կենսագրական տեղեկություններ։ Հովնաթանը վորպես աշխարհիկ կյանքի և խնդության յերգիչ։ Հովնաթանի սատիրան (ծաղր տերտերների և հարուստների նկատմամբ)։ Վերլուծել Հովնաթանի լեզուն և տաղաչափական արվեստը։ (2 ժամ)

Նյութեր

1. Տաղ ի վերա Գյուրջստանի գյոզալների
2. Տաղ գարնան

Հովնաթանի կենսագրությունը և բնութագիրը։

2. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ։ Կենսագրական տեղեկություններ. Սայաթ-Նովայի ստեղծագործության ընդհանուր ժողովրդական բնույթը։ Ազնվականության ազդեցությունը մեր աշուղի ստեղծագործության վրա։ Դժգոհության և գանգատի տարրերը տիրող կարգերի դեմ։

Կնոջ, սիրո, արվեստի և գինու գովքը Սայաթ-Նովայի յերկերում։ Սայաթ-Նովայի արվեստի ինտերնացիոնալ բնույթը։ Ընդգծել Սայաթ-Նովայի լեզվի ճոխությունը, հարստությունը, պարզությունը։ Վրացական ու իրանական ազդեցությունները նրա լեզվի և գրական վոճի վրա։

Սայաթ-Նովայի տաղաչափական բարձր արվեստը։ Սայաթ-Նովան Անդրկովկասի ժողովուրդների բանաստեղծ։ (2 ժամ)

Նյութեր

1. Խալիի նոքյար Սայաթ-Նովա
2. Բանանչա
3. Դուն են գլխեն իմաստուն իս...
4. Աշխարհումս ախ չիմ քաշի
5. Բլբուլի հիտ...
6. Բանի վոր ջան իմ...

Սայաթ-Նովայի կենսագրությունը և բնութագիրը։

դ. մաս

ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Աբովյանի ժամանակաշրջանը։ Ռուս-իրանական և ռուս-տաճկական պատերազմները։ Անդրկովկասի և Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից։ Աբովյանի հրապարակ գալը։ Հայ գրականության, մասնավորապես արձակի վիճակը։ «Վերք Հայաստանի» վեպը։ Աբովյանը վորպես աշխարհարար արձակ նոր գրականության առաջին վիպասան։ Կանգ առնել վեպի առաջաբանում արծարծված մտքերի վրա։ Աբովյանի առաջադիմական հայացքները գրականության աշխարհիկ բովանդակության և աշխարհաբար լեզվի, ժանկավարժական նոր մեթոդների և նոր դպրոցի մասին։ Աբովյանը փոխանցման շրջանի գրող։ Աբովյանի պայքարը վանական ֆեոդալական կուլտուրայի, սխոլաստիկ գրականության դեմ։ Ինչպես և արտահայտվել վեպում Աբովյանի ռուսական որիենտացիան։ Աբովյանի կրոնական նա-

խապաշարումները։ Աբովյանի ազգայնական հայացքները։ Աբովյանը և հայդուկիզմը։

Վեպի կառուցվածքը. պատկերներն ու համեմատությունները. լիրիքական տարրը։ Վեպի պատմական նշանակությունը։ Թերություններից մատնացույց անել՝ մասերի անհամաչափությունը, չափազանցությունները (հիպերբոլիզմ), շեղումները կենտրոնական նյութից, մակդիրների կուտակումը։

Քաղաքական եվոլուցիայի տարրերն Աբովյանի յերկերում։ «Թուրքի աղջիկը» պատմվածքը։ Կրոնական նախապաշարումների անհաղթահարելիությունն Աբովյանի համար։

Աբովյանը վորպես առակախոս։ Ժողովրդական բանահյուսության ազդեցությունն Աբովյանի վրա։ (6 ժամ)

Նյութեր

1. «Վերք Հայաստանի» (հատվածներ)
   ա) Առաջաբան
   բ) Բարիկենդանի պատրաստությունը
   գ) Աղասին
   դ) Գյուղը և քեթխուդաները
   յե) Սարդարի ֆառաշները
   զ) Յերևանի բերդը
2. «Թուրքի աղջիկը» (կրճատումներով)
3. «Պարապ վախտի խաղալիք»
   ա) Բարդին ու վաղը
   բ) Հացակեր փեշը
   գ) Գելն ու գառը
   դ) Աղվեսն ու գելը

Աբովյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Պատկանյանի դերը նոր շրջանի հայկական աշխարհաբար պոեզիայի զարգացման առաջին ետապում։ Պատկանյանը ազգայնական պոեզիայի հիմնադիրը։ Պատկանյան և Աբովյան, Պատկանյան և Նաղարյան։ Հակադրության փորձեր Պատկանյանի կողմից ցարիզմի նվաճողական-ռուսոֆիլացման քաղաքականության («Մշակը», «Տիկին և նաժիշտ» և այլն)։ Ցույց տալ, թե Պատկանյանը ինչպես և քննադատում շահամոլ ու ոտարամոլ հայ բուրժուազիային։ Ռոմանտիզմի և ռեալիզմի տարրերը Պատկանյանի յերկերում։ Պատկանյանի ստեղծած ռեալիստական տիպերը (Ալթմպով և այլն)։ Ժողովրդական բանահյուսությունը և Պատկանյանը («Բյոռ-ողլի» և այլն)։

Պատկանյանի քաղաքական սատիրան, ռուսական ազդեցություններ։ Հիշատակել նաև Նոր-Նախիջևանի բարբառով գրած ֆելյետոնները։

Պատկանյանի գրական լեզուն.. արհեստականություն և ժողովրդական ազդեցություններ։ (4 ժամ)

Նյութեր

1. Նկարիչ
2. Շինականի առավոտյան յերգը
3. Շինականի յերեկոյան յերգը
4. Մշակ
5. Անվնաս մարդը
6. Բյոռ-ողլի,
7. Փառասերը

Պատկանյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ. Կենսագրական տեղեկություններ։ Շահազիզի հասարակական-գրական արժեքը։ Շահազիզի լեզուն։ Աշխարհարարի հաղթանակը բանաստեղծության մեջ։ «Լեվոնի վիշտը» պոեմը։

Բայրոնի, Պուշկինի և Լերմոնտովի ազդեցությունը Շահազիզի վրա։ Մ. Նալբանդյանի գաղափարական վորոշ ազդեցությունը։ (2 ժամ)

Նյութեր

1. Յերազ
2. Գիշեր
3. Զոհեր
4. Մեռավ իմ մուսան
5. Լեվոնի վշտի նախերգանքը
6. Լեվոնի վշտի առաջին գլուխը

Կենսագրությունը և բնութագիրը։

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Նալբանդյանի ժամանակաշրջանը։ Հայ գրականության և կուլտուրայի վիճակն այդ շրջանում։

Նալբանդյանը որպես հեղափոխական-դեմոկրատական հրապարակախոս, բանաստեղծ, արձակագիր և քննադատ։

Նալբանդյանի հեղափոխական պայքարը ցարիզմի, կղերականության և ազգայնական բուրժուազիայի դեմ։ Նալբանդյանը և ռուս հեղափոխական դեմոկրատները—լուսավորիչները՝ Բելինսկի, Գերցեն, Ռադիշչև, Չերնիշևսկի և Դոբրոլյուբով։ Նալբանդյանի քաղաքական հեղափոխական պոեզիան («Ցերգ ազատության» և այլն)։ Նալբանդյանի արձակի գեղարվեստական պրիոմները և վորակը։ Վերլուծել հատվածներ «Ցերկրագործությունից» Նալբանդյանի դեմոկրատական հայացքների լուսաբանման և գրական նոր պրիոմներին ծանոթացնելու համար։ Պոռշյանի «Սոս և Վարդիթեր»-ի մասին գրած քննադատական աշխատությունը որպես հայ գրական-գիտական քննադատության հիմնադրումը և մինչև այժմ չգերազանցված մի գործ։

Նալբանդյանի հայացքները գրականության և լեզվի մասին։ Ժողովուրդը և գրական լեզուն։

Նալբանդյանի հայացքների եվոլուցիան։ Նալբանդյանի պայքարը Նազարյանի և Պատկանյանի դեմ։

Նալբանդյանի գրական ժառանգությունը։ Նալբանդյանի գրական և հասարակական դեմքի դաշնակցական-սպեցիֆիկյան աղավաղողները (Սուրխաթյան, Աշ. Հովհաննիսյան, Դ. Սիմոնյան, Վանանդեցի և այլն)։ (6 ժամ)

Նյութեր

1. Կարդալ Լենինի հատվածները Բելինսկու, Չերնիշևսկու, Գերցենի, Նեկրասովի և Դոբրոլյուբովի մասին։
2. Ցերգ ազատության
3. Մանկության որեր
4. Ապոլոնին
5. Բանաստեղծ
6. Կրիտիկա—«Սոս և Վարդիթեր»
7. «Ցերկրագործությունը» աշխատությունից

ա) «Սոցիալական խնդիրը և հեղափոխությունը»
բ) «Հողը և յերկրագործությունը»

Նալբանդյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Հակոբ Պարոնյանը որպես հայ անցյալ գրականության հանճարեղ յերգիծաբանը։ Պարոնյանի դեմոկրատական սկզբունքները և նրա սոցիալական սատիրան։ Նրա խիստ քննադատական վերաբերմունքը բուրժուական հասարակության և հոգեվորականության տարբեր շերտերի նկատմամբ (ամիրայության, ազգային ջոջերի, ազգային ինտելիգենցիայի)։ Ցույց տալ, թե ինչպես և Պարոնյանը մերկացնում ազգայնական «գործիչներին» («Մեծապատիվ մուրացկաններ», «Ազգային ջոջեր»)։

Պարոնյանի կապակցությամբ բացատրել՝ ինչ է սատիրան, հումորը։ Մատնանշել սատիրայի և հումորի առանձնահատկությունները «Ազգային ջոջեր»-ում և «Մեծապատիվ մուրացկաններ»-ում։ Պարոնյանի գրական ժառանգությունը։ Պարոնյանը որպես սատիրիկ հանդիսանում է համաշխարհային գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը։ Արիստոֆան, Սվիֆտ, Մոլյեր, Շչեդրին և այլն։

Պարոնյանի կոմեդիաները խորհրդային բեմի վրա։ (4 ժամ)

Նյութեր

1. «Մեծապատիվ մուրացկաններ»-ի առաջին գլուխը
2. «Ազգային ջոջեր»
ա) Հառաջարան
բ) Գրիգոր Արծրունի
գ) Կարապետ Ս. Իվթիվճյան
3. Քաղաքավարության վնասները

Պարոնյանի կենսագրությունը և բնութագիրը

ՐԱՖՖԻ։ Կենսագրական տեղեկություններ։ Րաֆֆու ժամանակաշրջանը։ Րաֆֆու ստեղծագործության ետապները։ Նրա առաջին վեպերը և գյուղական պատմվածքները («Սալբի», «Խաչագողը» և գյուղական ռեալիստական պատմվածքները)։ Րաֆֆու գրական-քաղաքական եվոլուցիան։ Հայ բուրժուազիայի ազգայ-

նական ազդեսիվ քաղաքականության արտահայտությունը Ռաֆֆու վեպերում («Խենթ», «Ջալալեդին», «Կայծեր» և այլն)։ Ռաֆֆին այդ քաղաքականության արտահայտիչն ու վոգեշնչողը գրականության մեջ։

Ռաֆֆու քաղաքական նացիոնալիստական ռոմանտիկական իդեալները. հայ պետականության վերականգնումը ժամանակակից բուրժուական կարգերով, կրոնի և պետության հաշտեցումը՝ կրոնական ռեֆորմների միջոցով, հայ բուրժուազիայի պետականության գերիշխումը Փոքր Ասիայում և հարևան ազգերի վոչնչացումն ու ասիմիլացիան հայերի մեջ։ Ռաֆֆին և դաշնակցությունը։

Ռաֆֆու քննադատական վերաբերմունքը գեպի հետադեմ և շահամոլ հայ առևտրական բուրժուազիան լիբերալիզմի դիրքերից։ Ռեալիստական վեպեր («Ջահրումար», «Վոսկի աքաղաղ» և այլն)։

Ռաֆֆու ռեալիստական յերկերը վորպես քննադատական ռեալիզմի արտահայտություն։ Նրանց ազդեցությունը հայ գրականության վրա։ «Վոսկի աքաղաղը» և Շիրվանզադեն։

Ռաֆֆու լեզվի պատկերավորությունը։ Լեզվական կուլտուրայի մշակման գործում արհեստականության և հնարանության վորոշ տարրեր։ Ռաֆֆու գրական վոճը։ Ռոմանտիզմի և ռեալիզմի պայքարը։ Նրա վեպերի սյուժեյի զարգացումը, կոմպոզիցիան։

Ռաֆֆու ազգայնական տիպերի շինծու, արհեստական և սխեմատիկ լինելը։

Ռաֆֆու պատմական վեպերը («Սամվել», «Դավիթ բեկ»)։ Հակացարական տրամադրություններ։

Ռաֆֆու կապակցությամբ կրկնել գրական վոճերի և ժանրերի բնորոշումները։ Ի՞նչ է ռոմանտիզմը, ի՞նչ է ռեալիզմը, ի՞նչ է վեպը, պատմվածքը։ Վորն է Ռաֆֆու ծառայությունը հայկական վեպի զարգացման գործում։ Ռաֆֆու վեպերի շինծու կողմերը։ (4 ժամ)

Նյութեր

1. Անբախտ Հռիփսիմե
2. Մեր լուսավորիչները
3. «Խաչագողի հիշատակարանը»—հատվածներ

ա) Թուլնի առաջին կաթիլները
4. «Վոսկի աքաղաղ»—հատվածներ
ա) Մասիսյանի խանութը և տունը
բ) Փորձված վաշխառուի խրատները
Ռաֆֆու կենսագրությունը և բնութագիրը։

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Հայկական դրամատուրգիան մինչ Սունդուկյանը—Միք. Պատկանյան, Հ. Կարինյան և այլն։

Կանգ առնել Սունդուկյանի ժամանակաշրջանի սոցիալական հարաբերությունների վրա։ Կապիտալիզմի զարգացումը և քաղաքի արհեստավորության քայքայման պրոցեսը։ Առևտրական դասակարգի վայրագությունները։ Սունդուկյանի դրամատուրգիան՝ սոցիալական այդ հարաբերությունների գեղարվեստական արտացոլումը։ Բուրժուազիայի մերկացումները։ Ցույց տալ թե ինչպես Սունդուկյանը կարողանում է ըմբռնել փողի այլանդակող նշանակությունը բուրժուական հասարակության մեջ, մերկացնում է բուրժուական ընտանիքի, բարոյականության և կուլտուրայի կեղծությունը և նրանց կախումը փողից։ Սունդուկյանի յերկերը վորպես ժողովրդական մասսաների բողոքի արտահայտություն։ Ցույց տալ թե ինչպիսի սիրով ու համակրանքով է պատկերում Սունդուկյանը ժողովրդի ներկայացուցիչներին (Պեպո, Կակուլի, Կեկել)։ Բուրժուազիայի տիպերը (Զիմզիմով)։

Սունդուկյանի լեզուն։ Թբիլիսիի բարբառը և Սունդուկյանի լեզվի դժվարությունները։

Սունդուկյանի քննադատական ռեալիզմի առանձնահատկությունները։ Սունդուկյանի դրամատուրգիայի բնորոշ կողմերը. նրա տիպերը և դրամատիզմը։

Սունդուկյանի կրած ազդեցությունները (Գոգոլ, Ոստրովսկի)։

Սունդուկյանը և հայկական թատրոնը։ Սունդուկյանը վրացական բեմի վրա. Սունդուկյանը վրաց ժողովրդի սիրելին։

Մենք և Սունդուկյանի ժառանգությունը։ (4 ժամ)

Նյութեր

1. Պեպո
2. Իմ թաղումը
Կենսագրությունը և բնութագիրը։

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Պռոշյանի ժամանակաշրջանը։ Հայ գյուղի դասակարգային շերտավորումը և Պռոշյանի գրական հրապարակ գալը։ Պռոշյանը վորպես գյուղական բուրժուազիայի՝ կուլակության և ցարական չինովնիկության ռեալիստական քննադատն ու մերկացնողը։ Պռոշյանի ստեղծած ցեցերի՝ կուլակների և չինովնիկների տիպերը (Միկիտան Սաքո, Բալասան աղա, Բզզե, Տեր Սուքիաս և այլն)։

Աշխատավոր գյուղացիության տառապանքների ձայնը Պռոշյանի յերկերում։ Շահագործողների մերկացումը. համակրանք շահագործվողների նկատմամբ։ Մեկնաբանել, թե ինչպես ևր Պռոշյանն ստեղծում հակացարական ըմբոստ տիպեր (Հունո, Վարդան և այլն)։

Պռոշյանի թուլությունը. չար ու բարի չինովնիկներ, սնոտիապաշտության տարրեր։

Պռոշյանի ստեղծագործության ժողովրդական-դեմոկրատական բնույթը։ Պռոշյանի ռեալիզմի բնորոշ կողմերը. մերկացումներ, սոցիալական հարաբերությունների խտացված նկարագրություններ, կենցաղային մանրամասնությունների պատկերումներ։ Զգձգվածության և նատուրալիզմի տարրերը Պռոշյանի յերկերում։ Պռոշյանի լեզուն. գրական լեզուն և բարբառը։

Նալբանդյանը Պռոշյանի գրական կարողության, վոճի և լեզվի մասին։

Մենք և Պռոշյանի ժառանգությունը։ Հակահեղափոխական նացիոնալիստների-տրոցկիստների պայքարը Պռոշյանի դեմոկրատական ժառանգության դեմ։ Նրա գրական մեծ արժանիքները նվաստացնելու փորձեր (Վանանդեցի, Սուրբաթյան. Դր. Ամիոնյան)։ (6 ժամ)

Նյութեր

1. «Հարի թոռներ» — հատվածներ
   ա) Միկիտան Սաքոն
   բ) Ցատավուլ
   գ) Արդարադատություն
2. «Ցեցեր» — հատվածներ

   ա) Ցեցապետը
   բ) Տանուտեր Խուդոն
   գ) Միկիտան Սաքոյի յերկվորյակը
3. Աքցիզչի

Պռոշյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Աղայանն իբրև արձակագիր և բանաստեղծ։ Աղայանն իբրև մանկական գրող։ Աղայանի ստեղծագործության դեմոկրատական բնույթը։

Նահապետական գյուղի քայքայման պրոցեսի պատկերումը Աղայանի յերկերում։ Սոցիալական պայքարի արտացոլումը։ Շահագործվող գյուղացիության պայքարը հողի համար («Ցերկու քույր»)։ Վերլուծել ժողովրդական բունտար Արղումանի տիպը։ Աղայանի հեքիաթները։ Աղայանի սոցիալական ուտոպիան։ Աղայանի գաղափարախոսության գյուղացիական սահմանափակվածությունը։

Աղայանի ռեալիստական վոճը։ Ռոմանտիկական տարրեր։ Աղայանի պարզ ու գունեղ լեզուն. բարբառները և Աղայանի գրական լեզուն։ (4 ժամ)

Նյութեր

1. Ճախարակ
2. Ցերկու քույր (կրճատումներով)
3. Տորք-Անկեղ

Աղայանի կենսագրությունը և բնութագիրը։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Դուրյանն իբրև տաղանդավոր քնարերգու։ Ֆրանսիական ռոմանտիկ գրականության ազդեցությունը Դուրյանի վրա (Վ. Հյուգո, Լամարտին)։ Դուրյանի պոեզիայի սոցիալական արմատները։ Սերը և սիրո վոգերերգությունը Դուրյանի յերկերում։ Հոռետեսություն և լքում. մանվան գաղափար, խոհեր կյանքի հակասությունների մասին, պասսիվ տրտունջ կյանքի դաժան ոբենքների դեմ։ Բողոք ատծու դեմ։

Դուրյանի տաղաչափական արվեստը։ Նրա լեզվի պատկերավորությունը և գունեղությունը։ (4 ժամ)

20435-59
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Այ ССР

Նյութեր

1. Սիրել
2. Դրժել
3. Թրքուհին
4. Տրտունջ
5. Լճակ
6. Ներա հետ
7. Սև, սև
8. Ինձ կսեն
9. Իմ մահը

Կենսագրությունը և բնութագիրը։

ՄՈՒՐԱՑԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Մուրացանը վորպես վիպագիր։ Պահպանողական քննադատական վերաբերմունք դեպի կապիտալիզմը և բուրժուական կուլտուրան։ Բուրժուական լիբերալ մտավորականության մերկացումը («Նոյի ագռավ», «Առաքյալը»)։ Գյուղական կուլակության մերկացումները։ Մուրացանի համակրանքը դեպի քաղաքի հալալ աշխատանքով ապրող արհեստավորությունը և գյուղի աշխատավորությունը («Լուսավորության կենտրոն», «Առաքյալը»)։ Ազգայնականության տարրեր Մուրացանի առանձին յերկերում։

Մուրացանի պահպանողական պատրանքները։ Մուրացանի գրական վոճը։ Ռոմանտիզմի և ռեալիզմի պայքարը Մուրացանի յերկերում։ Քննադատական ռեալիզմի գերակշռող դերը։

Մուրացանը վորպես պատմական վեպի հեղինակ («Գեվորգ Մարզպետունի»)։ Մուրացանի ճոխ ու գունեղ գրական լեզուն։ Մուրացանի լեզվական կուլտուրան և մենք։ (4 ժամ)

Նյութեր

1. «Առաքյալը» (կրճատումներով)

Մուրացանի կենսագրությունը և բնութագիրը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Հովհաննիսյանը վորպես քնարերգու։ Ժողովրդական քանահյուսության ազդեցությունը Հովհաննիսյանի ստեղծագործության վրա։ Հովհաննիսյանի խոշոր դերը հայկական աշխարհարար պոեզիայի զարգացման գործում։ Սոցիալական բողոքի շեշտը նրա յերկերում։ Ընկճված ու լքված անհատի բողոքի ձայնը։ Նրա կոչը՝ կարեկցելու և ոգնելու թշվառին։ Անհատապաշտական մոտիվները նրա պոեզիայում։ Բնության, սիրո և կնոջ նկարագրումները։ Ազգայնական խորթ տարրերը նրա մի շարք գրվածքներում («Տղմուտ» և այլն)։ Հովհաննիսյանի վոճը և լեզուն։ Նրա տաղաչափության բարձր արվեստը։ Նրա գրական լեզվի թարմությունը, պատկերների հարստությունը և գունեղությունը։ (4 ժամ)

Նյութեր

1. Գեղջկուհու դարդը
2. Արազն յեկավ
3. Ալագյազ բարձր սարին
4. Փափագ
5. Ամենայն անգամ
6. Մնաք բարով, արև, գարուն
7. Ա՜խ, տվեք ինձ քաղցր մի քուն
8. Հ ա տ ի կ
8. Արտավազդ
10. Վահագնի ծնունդը
11. Աշուղ
12. Հակոբ Դուրյան (հատված)

Հովհաննիսյանի կենսագրությունը և բնութագիրը

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ։ Պատմել Շիրվանզադեյի համառոտ կենսագրությունը։ Հայ արձակ գրականության զարգացման հիմնական ուղղությունները Շիրվանզադեյի հանդես գալու նախորյակին։ Ազգայնական ռոմանտիկական գրականության վորոշ ռեալիստական տարրերով՝ Պատկանյան—Բաֆֆի և դեմոկրատական ռեալիստական ռոմանտիզմի վորոշ տարրերով՝ Աղայան—Պռոշյան։

Շիրվանզադեյի «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքը վորպես նոր յերևույթ հայ գրականության մեջ։

Շիրվանզադեյի աշխարհայացքը և ստեղծագործական մեթոդը։ Շիրվանզադեն քննադատական ռեալիզմի ներկայացու-

ցիչ։ Շիրվանզադեն խիստ կերպով քննադատում ու մերկացնում է բուրժուազիայի արատները (ծայրահեղ շահամոլություն, ժլատություն, փողի ֆետիշացում, ընտանեկան կյանքի, սիրո և պատվի յենթարկումը նյութական շահերին, գաղտնային վերաբերմունք դեպի ժողովուրդը և բանվորները)։ Նրանց դատապարտելու համար։ Կապիտալիստ բուրժուաների տիպերը (Մարությանց, Մարկոս աղա Ալիմյան Ելիզբարյան և այլն), լիբերալ բուրժուաների տիպերը (Սմբատ Ալիմյան)։

Բանվորի տիպը Շիրվանզադեյի յերկերում։ Բանվորական մասսաների դասակարգային ինքնագիտակցության տարրերի պատկերումն 80-ական թվականների սկզբներին։

Շիրվանզադեն և բանվորական հարցը։

Գավառական դաժան ու խավար կենցաղի մերկացումը Շիրվանզադեյի յերկերում։ (8 ժամ)

Շիրվանզադեն վորպես դրամատուրգ։

Նյութեր

1. Հրդեհը նավթագործարանում
2. Նամուս (վերջին գլուխը)
3. Մարկոս աղա Ալիմյանի մահը և թաղումը
4. Պատվի համար (հատված)

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ։ Պատմել համառոտ կենսագրությունը։ Համառոտ պատկերել հայ պոեզիան մինչև Թումանյանը։ Թումանյանը հայ պոեզիայի գագաթը։ Թումանյանը գյուղացիական աշխատավորության յերգիչը («Հառաչանք», «Գութանի յերգը» և այլն)։ Թումանյանի հիմնականում ռեալիստական ստեղծագործական մեթոդը։ Ցույց տալ, վոր Թումանյանը վորպես ռեալիստ վարպետությամբ կոնկրետ պատկերների մեջ կատարում է ընդհանրացումներ, խորը արտացոլում և ժամանակաշրջանը։ Ցույց տալ Թումանյանի պոեզիայի ձևի պարզությունը, բանաստեղծական չափի զգացումը։

Թումանյանի քննադատական վերաբերմունքը դեպի բուրժուական իրականությունը («Դիքոր», «Պոետն ու մուսան»)։ Գյուղական բուրժուազիայի՝ կուլակության մերկացումները։ Թումանյանը աշխատավոր ժողովուրդների խաղաղ բարեկամության քարոզիչ («Վրաստանի պոետներին» և այլն)։

Թումանյանը վորպես մեծագույն լիրիկ և եպիկ։

Թումանյանը վորպես գեղարվեստական արձակի վարպետ։ Թումանյանը վորպես ժողովրդական բանահյուսության տաղանդավոր մշակող։ Ֆոլկլորի տարրերը Թումանյանի պոեզիայում։ Թումանյանը և հայկական եպոսը («Սասունցի Դավիթը»)։

Թումանյանի հոռետեսությունը և սոցիալական ուտոպիան («Քառյակներ»)։

Թումանյանը Խորհրդային իշխանության բարեկամ ու խորհրդային քաղաքացի։ (8 ժամ)

Նյութեր

1. Իմ յերգը
2. Գութանի յերգը
3. Համերգ
4. Հին որհնություն
5. Անիծած հարսը
6. Հառաչանք
7. Քառյակներ
8. Փարվանա
9. Անուշը
10. Թմկաբերդի առումը
11. Սասունցի Դավիթը
12. Ցեղջերու
13. Նեսոյի քարաբաղնիսը

Թումանյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՆԱՐ—ԴՈՍ։ Պատմել Նար-Դոսի կենսագրությունը։ Նար-Դոսը վորպես ռեալիստ։ Նար-Դոսի քննադատական վերաբերմունքը դեպի բուրժուական իրականությունը և դրա արտացոլումը նրա ռեալիստական յերկերում («Նեղ որերից մեկը», «Սպանված աղավնի», «Մահը»)։ Նար-Դոսի գրվածքների առանձնահատկությունները—հոգեբանական փորփրումներ, ցնցող դրամատիզմ, «անտարբերություն» դեպի կյանքը։ Նար-Դոսը վորպես գեղարվեստական տիպերի կերտման վարպետ—Պատրիկյան, Թուսյան, Շահյան, Աննա Սարոյան և այլն։ Նար-Դոսը և խորհրդային իրականությունը։

Նար-Դոսի կրած ազդեցությունները. Մուրացան և Դոստոևսկիյ։ (6 ժամ)

Նյութեր

1. Նեղ որերից մեկը
2. Թե ինչ յեղավ հետո...
3. Սպանված աղավնի (հատված «Թուսյան»)
4. Մահը (հատված «Շահյան»)
5. Կարմիր մոհիկանները

Նար-Դոսի կենսագրությունը և բնութագիրը։

ՉԻՎԱՆԻ։ Կենսագրական տեղեկություններ։ Հայ աշուղական գրականությունը 19-րդ դարի վերջերին։ Չիվանին վորպես այդ շրջանի աշուղական գրականության ամենատաղանդավոր ներկայացուցիչը և նրա տրադիցիաների պահպանողը։ Չիվանու ստեղծագործության սոցիալական արմատները, Չիվանին ժողովրդական յերգիչ։ Ժողովրդի խորը վշտի, սոցիալական տառապանքների և քաղաքական իրավազրկության մոտիվները Չիվանու յերգերում։ Հակացարական յերգեր։ Չիվանու մանրբուրժուական արհեստավորական սահմանափակվածությունը։ Ազգայնական աննշան խորթ մոտիվներ և ժողովուրդների համերաշխության ու յեղբայրության գաղափարի ակտիվ քարոզ։ Գանգատ և հուսահատություն։ Սիրո մոտիվներ։

Չիվանու վոճը։ Նրա հարուստ ու պարզ լեզուն։ Աշուղական յերգերի տեսակների, բանաստեղծական ձևերի և տաղաչափության պաշտպանումը։ (4 ժամ)

Նյութեր

1. Սառույց
2. Աշխարհ
3. Գեղեցկուհի
4. Գանգատ
5. Պաղ աղբյուրի մոտ
6. Առավոտ

Չիվանու կենսագրությունը և բնութագիրը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ։ Ծատուրյանի կենսագրությունը։ Հայ պոեզիան Ծատուրյանի գրական հրապարակ գալու նախորյակին։ Ծատուրյանի դեմոկրատական աշխարհայացքը։ Քննադատական վերաբերմունք դեպի բուրժուազիան։ Ցույց տալ, թե ինչպես Ծատուրյանը քննադատելով վիշատիչ բուրժուազիային, գովում եր արդար վաստակը և աշխատավորին։ Ներբող յերկրի մշակներին և սերմնացաններին։ Բուրժուական ինտելիգենցիայի և հոգևորականության մերկացումները։ Կարմիր որերի գովերգումը։

Ծատուրյանի լիրիկան, ներբողը և յերգիծական բանաստեղծությունը։ Ցույց տալ Ծատուրյանի բանաստեղծական արվեստի առանձնահատկությունները—լեզվի, վոճի և բանաստեղծության կառուցվածքի պարզությունը, զգացմունքների անկեղծությունը և անմիջականությունը։

Ծատուրյանը թարգմանիչ Պուշկինի, Լերմոնտովի և այլն։ (6 ժամ)

Նյութեր

1. Թշվառին
2. Պոետին
3. Սիրելի ընկեր
4. Ցեսչեմ յերգում
5. Սերմնացան
6. Յերկրի մշակներ
7. Բանվորուհու որորը
8. Իդեալիստը

Ծատուրյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ։ Փափազյանի մասին կենսագրական տվյալներ։ 90-ական թվականներին Բաֆֆու ազդեցության տակ գրած ազգայնական պատմվածքները («Յենիչերի», «Սանթո», «Թեթև հաճույքներ» և այլն)։

Փափազյանի կատարած բեկումը ազգայնական ռոմանտիզմից (բաֆֆիականությունից) դեպի ռեալիզմը։ Հողի համար մեր գրվող պայքարի արտացոլումը Փափազյանի յերկերում («Հողի աշխատավորը»)։

Փափազյանի գրական ժանրերը—պատմվածք, վեպ, դրամա, նամականի։ Պատկերել Փափազյանի ստեղծագործական մեթոդը—նրա զարգացումը ռոմանտիզմից դեպի քննադատական ռեալիզմը։

Սիմվոլիկ պատմվածքներ՝ «Վիշապ», «Կորսված արդարությունը»։

Փափազյանի պարսկական պատմվածքները։ Լյումպենների հակադրումը հարուստներին։ Փափազյանի լեզուն։ (4 ժամ)

Նյութեր

1. Աբեղը
2. Հողի աշխատավորը
3. Վիշապը
4. Ընթրոստի մահը
5. Զրուչո-քար
6. Լուր-դա լուր

Փափազյանի կենսագրությունը և բնութագիրը։

ԱՐՇԱԿ ԱԳԱՊՅԱՆ։ Ագապյանի համառոտ կենսագրությունը։ Ագապյանը վորպես գյուղագիր։ Պռոշյանի ազդեցությունը Ագապյանի վրա։ Գյուղական բուրժուազիայի, կուլակության մերկացումը Ագապյանի պատմվածքներում։ Ագապյանի վոճի ռեալիստական բնույթը։ Ագապյանի լեզուն (Ղազախի գավառաբառբաբ՝ գրական վորոշ մշակումով)։ (4 ժամ)

Նյութեր

1. Գյուղացու որը
2. Մուսինի գանգատը

Ագապյանի կենսագրությունը և բնութագիրը։

Ա. ԱԴԵԼՅԱՆ։ Կենսագրական համառոտ տվյալներ։ Ադելյանի գյուղական պատմվածքների գեղարվեստական արժանիքները։ Գյուղական բուրժուազիայի՝ կուլակության մերկացումները Ադելյանի գրվածքներում։ Ադելյանը նահապետական ընտանիքում տիրող բռնակալական իրավունքների և սնոտիապաշտության քննադատ։ Այդ քննադատությունների գյուղացիական սահմանափակվածությունը։

Ադելյանի ալձակի առանձնահատկությունը։ Ադելյանի գրական լեզուն և գավառաբառբարի ոգտագործումը նրա կողմից։ (2 ժամ)

Նյութեր

1. Վրեժը
2. Սկեսուրը

Ադելյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ։ Միրաքյանի կենսագրությունը։ «Լալվարի վորսը» վորպես գյուղի նահապետական կենցաղի քայքայման գեղարվեստական արտացոլումն։

Ցույց տալ Միրաքյանի քննադատական վերաբերմունքը գեպի նահապետական կենցաղի առանձին կողմերը (պատվի, նամուսի, ազգի հասկացողությունը, տղամարդու բռնակալական իրավունքներն ընտանիքում և այլն)։

Պոեմի կոմպոզիցիայի առանձնահատկությունները։ Ինչպես և պատկերում բացասական ու դրական տիպերին։ Ինչպես և պատկերում հեղինակը բնությունը, քոչվորներին ու նրանց կենցաղը։

Պոեմի հարուստ ու պարզ լեզուն։ (4 ժամ)

Նյութեր

1. Լալվարի վորսը

Միրաքյանի կենսագրությունը և բնութագիրը։

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ (1860-1915)։ Համառոտ կենսագրական տեղեկություններ։ Զոհրապը ազգայնական հրապարակախոս, Զոհրապն իբրև նովելիստ, ռեալիստ գրող։ Թյուրքահայ մանր բուրժուական խավերի կենցաղի և կյանքի արտացոլումը Զոհրապի յերկերում։ («Կյանքը ինչպես վոր է», «Խղճմտանքի զոհերը» և «Լուռ յավեր»)։ Մոպասանի ազդեցությունը և նրա գրելու տեխնիկայի յուրացումը։ (2 ժամ)

Նյութեր

1. Զարուղոն
2. Մյուսը
3. Այինկա

Զոհրապի կենսագրությունը և բնութագիրը։

ՅԵՐՎԱՆԴ ՈՏՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Ոտյանը և հայկական յերգիծական գրականությունը։ Ոտյանը հայ առևտրական բուրժուազիայի և տգետ շահամոլ հոգևորականության ռեալիստական քննադատը յերգիծանքի միջոցով։

Դրական և բացասական բուրժուաներ։ Ազգայնականություն Ոտյանի աշխարհայացքի մեջ։

Ազգային բարեգործության քարոզ և ծաղր բարեգործների նկատմամբ։

Ոտյանի ռեալիզմի բուրժուական սահմանափակվածությունը։

Ոտյանի սատիրայի սոցիալական արժեքը։

Ոտյանի գեղարվեստական պրիոմները։

Հոգեբանական տիպեր։ Նրա լեզվի ճոխությունը և սրությունը։ (4 ժամ)

Նյութեր

1. Ազգային բարերարը
   Ոտյանի ընութագիրը

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ։ Կենսագրական տեղեկություններ։ Մեծարենցի անհատապաշտական լիրիկայի սոցիալական արմատները։ Անհատապաշտություն, մենակության և հոռետեսության մոտիվներ։

Մեծարենցը՝ մանր բուրժուական հուսալքված մտավորականության արտունչի արտահայտիչը։

Մեծարենցը և նրա կրած ազդեցությունները. Դուրյանի և ֆրանսիական սիմվոլիստների ազդեցությունները։

Մեծարենցի տաղաչափական բարձր արվեստը։ Նրա պոեզիայի մշակված ու ճոխ լեզուն։

Մեծարենցը տաղանդավոր պեյզաժիստ։ Բնության նկարագրությունը և մարդկանց անտեսումն այդ բնության մեջ։ (4 ժամ)

Նյութեր

1. Զմրան պարզ գիշեր
2. Գետափի յերազանք
3. Մթնաշաղներ
4. Ջուրեն դարձեն
5. Իրիկունը
6. Սիրերգ
7. Աքասիներու շուքին տակ
8. Ջրաուք
   Կենսագրությունը և բնութագիրը։

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ։ Պատմել Կուրղինյանի կենսագրությունը։ Կուրղինյանի ստեղծագործության առաջին շրջանը։

Գործադուլային հեղափոխական շարժումը Հարավային Ռուսաստանում և Կուրղինյանի բեկումը դեպի հեղափոխությունը։

Կուրղինյանի ստեղծագործության նոր շրջանը։ 1905 թվի ռուսական առաջին հեղափոխության արտացոլումը Կուրղինյանի յերկերում։ Կուրղինյանը վորպես բանվոր դասակարգի ուղեկից։ Բուրժուազիայի քննադատությունը և մերկացումները («Բանվորները», «Հանգցրեք ջահերը» և այլն)։ Կրոնի և յեկեղեցու քննադատությունը («Հետ տար քո խաչը»)։

Կուրղինյանի պոեզիայի թափի իջեցումը ռեակցիայի տարիներին։ Նրա սպեցիֆիկյան միջավայրը և ազգայնական մոտիվները («Կույր հարսը» պատմվածքը և այլն)։

Կուրղինյանի բանաստեղծական լեզվի ճոխությունը, պարզությունը և գունեղությունը։ Ցույց տալ բանաստեղծուհու տաղաչափական բարձր արվեստը։ (6 ժամ)

Նյութեր

1. Ազատության ղողանջները
2. Հետ տար քո խաչը
3. Հանգցրեք ջահերը
4. Բանվորները
5. Այնտեղ գնացեք
6. Գիղջկուհու մորմոքը
7. Արծվի սերը
8. Գութանի յերգը
9. Ցես ըմբոստացա
   Կուրղինյանի կենսագրությունը և բնութագիրը։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (1875)։ Համառոտ կենսագրական տեղեկություններ։ Ավետիք Իսահակյանը վորպես խոշորագույն լիրիկ։ Նրա «Ցերգեր ու վերքեր»-ի մոտիվները՝ բողոք և ըմբոստացում տիրող բուրժուական անարդար կարգերի դեմ, սեր և հիասթափություն, անարխիզմ և անհատապաշտություն։ Առանձնապես նշել «Ալագյազի մանիներ»—բանաստեղծությունների սերիան։

«Աբու Լալա Մահարի»-ն իբրև սինթեզ Ավ. Իսահակյանի ծայրահեղ անհատապաշտական—անիշխանական հայացքների։ Այդ

պոեմայի հակաբուրժուական կողմերը։ «Արու Լալա»-ն իբրև Իսահակյանի քնարական արվեստի գագաթը։ Նացիոնալիզմի ազդեցությունը Իսահակյանի վորոշ գործերի վրա։

Ավ. Իսահակյանի արձակը (հատվածներ «Ուստա Կարո»-ից)։

Իսահակյանի ժանրերի և գրական տեսակների բազմազանությունը—բանաստեղծություն, պոեմ, պատմվածք, բալլադ, առակ, հովերգ, ելեգիա և այլն։

Իսահակյանի վոճը։ Ցույց տալ վոր նրա ստեղծագործական մեթոդը հիմնականում ռոմանտիզմն է։ Նրա պոեզիայի հատկանիշը—հուզականություն, պատկերավորություն, ժողովրդական բանահյուսության խորն ազդեցություն։ Ինչպես և Իսահակյանը մշակում և ոգտագործում ֆոլկլորը։ (6 ժամ)

Նյութեր

1. Ցես յերգիչ եմ
2. Անհայտ, անորոշ
3. Սիրտս յերկինք է
4. Կուզե՞ս լինեմ...
5. Սիրտ իմ, սպասիր
6. Ցեզ կուզեյի արևավառ...
7. Կյանքի կովում...
8. Մաճկալ ես...
9. Ախ, մեր սիրտը
10. Շուրջս ապրում են...
11. Ալագյազի մանիները (հատվածներ)
12. Ասպետի սերը
13. Ուստա Կարո (հատվածներ)

Իսահակյանի կենսագրությունը և ընութագիրը։

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ։ Հակոբյանի կենսագրությունը։ Հակոբյանը՝ հեղափոխական պրոլետարիատի յերգիչը և հայկական պրոլետարական պոեզիայի հիմնադիրը։ Նրա գրական գործունեության յերեք շրջանը, մինչև 1905 թիվը. 1905-ից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և հետհոկտեմբերյան շրջանը։ Աշիտանքի հասկացողության եվոլուցիան նրա բանաստեղծությունների մեջ («Նամուս ու ղեյրաթ»-ից

«Դեպի գործարան»)։ Հակոբ Հակոբյանի պոեզիան իր թեմատիկայով, հեղափոխական վոգով և գեղարվեստական կատարումով վորպես զարգացման նոր աստիճան հայկական պոեզիայի համար։

Հակոբյանը—բոլշևիկ բանաստեղծ։ Հակոբյանի պոեզիայի հակաազգայնական ինտերնացիոնալիստական ընույթը (կարդալ՝ «Ազգայիններին»)։

Անվհատության, լավատեսության և բանվոր դասակարգի հաղթանակի վառ հավատի մոտիվները Հակոբյանի բանաստեղծություններում («Հեղափոխություն», «Մեռան, չկորան», «Մեկ ել, մեկ ել», «Ցես ձեզ ասում եմ» և այլն)։ Բանվոր դասակարգի ավանգարդի՝ բոլշևիկյան կուսակցության հերոսական պայքարի արտացոլումն Հակոբյանի յերկերում ռեակցիայի շրջանում։ «Նոր առավոտ» պոեման։ Սպանդարյանը և Շահումյանը Հակոբյանի մասին։ Դաշնակցության և սպեցիֆիկների պայքարը Հակոբյանի դեմ։ Հակոբյանի գրական վոճը. հեղափոխական ռոմանտիզմի ու սոցիալիստական ռեալիզմի տարրերը։ Հակոբյանի լեզվի պարզությունը, անմիջականությունը, պատկերավորությունը։

Հակոբյանի հետհոկտեմբերյան ստեղծագործությունները («Բոլշևիկ և Շերկանալը», «Վոլխովստրոյ», «Լենինգրադ», «Բաքու», «Գյանջա», «Թիֆլիս» և այլն)։ (8 ժամ)

Նյութեր

1. Նամուս ու ղեյրաթ
2. Արի, պոետ, դարի պոետ
3. Կաթսավար
4. Իմ աշխարհը
5. Մեկ ել մեկ ել
6. Հեղափոխություն
7. Մեռան՝ չկորան...
8. Ցես այն եմ սիրում
9. Աշխատանքի յերգը
10. Մաքառման ժամին
11. Եռապը
12. Քաղաքը
13. Պահակը
14. Ազգայիններին

15. Վ. Ի. Լենինին
16. Կարմիր գարնան
17. Նոր առավոտ
18. Հավասարություն
Հակոբյանի կենսագրությունը և բնութագիրը։

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ։ Կենսագրական տեղեկություններ։ Տերյանի ժամանակաշրջանը և սոցիալական միջավայրը. Տերյանի առաջին գրական գործերը. Թումանյանի և Իսահակյանի ազդեցությունները։ Տերյանի բեկումը դեպի սիմվոլիզմը։ 1905 թ հեղափոխության պարտության թողած ազդեցությունը Տերյանի վրա։ Նրա պոեզիայի մոտիվները՝ անհատապաշտություն, հոռետեսություն, հուսալքում, անրջային տրամադրություն, յերազ, պատրանք և լուսավոր տենչեր։

Տերյանի տուրքը հայկական ազգայնականությանը մի շարք բանաստեղծությունների մեջ։ Հակասություններ։ Տերյանի վերադարձը դեպի հեղափոխությունը։ Դասակարգային պայքարի մոտիվները։ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը և Տերյանի գրական վերածնունդի նշանները։

Սիմվոլիստների ազդեցությունը (Պոլ Վեռլեն, Վ. Բրյուսով, Բլոկ)։ Տերյանի բարձր արվեստը։ Հայկական տաղաչափության կատարելագործությունը։ Բանաստեղծական ձևերի բազմազանությունը (տրիոլետ, սոնետ, գազել և այլն)։ Լեզվի հղկվածություն, նրբություն, յերաժշտականություն։ (6 ժամ)

Նյութեր

1. Տխրություն
2. Աշնան մեղեդի
3. Հրաժեշտ
4. Մթնշաղ
5. Աշուն և
6. Կարուսել
7. 14 տող
8. Շշուկ ու շրշյուն
9. Հատված (հոգատանջ սրտով)
10. Հրաժեշտի գազել
11. Կարծես թե դարձել եմ

12. Դու կդաս կրկին
13. Սրևածագ
14. Գարնան քաղաքում
15. Յերկու սոնետ
16. Վերադարձ
17. Լինեյի չորան
18. Այնպես նազիկ
19. Առավոտ
20. Սիրտդ վորպես
21. Լուսաբացին նա բարձրացավ
22. Պետերբուրգ
23. Վոլգուն հեղափոխության
Տերյանի կենսագրությունը և բնութագիրը

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Խորհրդային գրականության 10-րդ դասարանի դասընթացի նպատակն է.

1. Ցույց տալ, թե ինչպես մեր սոցիալիստական հասարակարգում Խորհրդային Միության հանրապետությունների գրականությունը զարգանում է ընկեր Ստալինի առաջադրած «ձևով ազգային, իսկ բովանդակությամբ ինտերնացիոնալիստական, սոցիալիստական» ուղիով՝ արտահայտելով Խորհրդային Միության ժողովուրդների ընդհանուր պայքարն ու ձգտումները կոմունիզմի հաղթանակի համար։

2. Ծանոթացնել աշակերտին խորհրդային հանրապետությունների լավագույն գրողների ստեղծագործությանը՝ աշակերտի համար պարզելով այդ ստեղծագործությունների ճանաչողական—դաստիարակչական—գեղարվեստական արժանիքները։

3. Գեղարվեստական գործերի նմուշներով ցույց տալ պրոլետարական—սոցիալիստական գրականության զարգացման համար բնորոշ եռապները։

4. Գրականության զարգացման հիմնական եռապների մասին գաղափար տալ՝ գրականության տարբեր հոսանքների պայքարի դասակարգային էությունը վեր հանելով և ցույց տալով կուսակցության պայքարը հակալենինյան—հակաստալինյան հակահեղափոխական «տեսությունների» դեմ գրականության բնագավառում (տրոցկիզմ, վորոնսկիականություն, ավերբախականություն, պերեվերզևականություն, բուխարինականություն—և նրանց արտահայտիչները հայ գրականության բնագավառում (Սուրխաթյան, Կարինյան, Մակինցյան, Վանանդեցի, և այլն)։

5. Խորհրդային գրականության զարգացման տարբեր եռապների մասին գաղափար տալիս ցույց տալ կուսակցության պայքարը հակախորհրդային, հակահեղափոխական գրական պրոդուկցիայի դեմ։

6. Խորհրդային գրական կոնկրետ յերկերի վերլուծությամբ ցույց տալ սոցիալիստական ռեալիզմի՝ վորպես սոցիալիստական արվեստի հիմնական ուղու բնորոշ արտահայտությունները (իրականության ճիշտ անդրադարձումը, մարդկանց և յերևույթների ցուցադրումը նրանց զարգացման պրոցեսի մեջ)։ Սոցիալիստական նոր հարաբերությունների և նոր հոգեբանության վեր հանումը։ Գրողի կուսակցականությունը (կոմունիստական իմաստով) վորպես նրա ամբողջ ստեղծագործության հիմնական եությունը։

Կանգ առնել յերկի 1) կառուցվածքի, 2) լեզվի, 3) պատկերավոր արտահայտությունների, 4) տիպերի հոգեբանության վերլուծության, 5) միջավայրի և սոցիալական հարաբերությունների ճիշտ ընորոշման վրա և այլն։

Վերոհիշյալ մոտեցմամբ պետք է անցնել հեղինակները և նրանց յերկերը։

ՀԱՅ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբ Հակոբյանը վորպես հայ պրոլետարական գրականության հիմնադիր։ Կենսագրական տեղեկություններ։ Նրա ստեղծագործության զարգացման ետապները։ Պայքարը ցարիզմի, կապիտալիզմի դեմ և հեղափոխական ընդհատակի աշխատանքը Հակոբյանի բանաստեղծություններում։ Սոցիալիստական շինարարությունն ու խորհրդային յերկրի հաղթանակի արտացոլումը Հակոբյանի յերկերում։ Քաղաքական լիրիկան վորպես Հակոբյանի հիմնական ժանրը։ Հակոբյանի ռեալիզմը նրա պոեմներում։ Հակոբյանի լեզվի պարզությունն ու արտահայտչականությունը։ Հակոբյանի ստեղծագործության դերը հեղափոխական սերնդի դաստիարակության գործում։ Շահումյանն ու Սպանդարյանը Հակոբյանի մասին։

Նյութեր

Մեկ ել, մեկ ել...	Ցես այն եմ սիրում...
Հեղափոխություն	Քաղաքը
Իմ աշխարքը	Բոլշևիկ ե Շիրկանալը
Մեռան, չկորան	Պետրոպավլովսկ
Պրոլետարիատին	Ջորագեսում

2. Արազի։ Արազու նախահոկտեմբերյան շրջանի արձակ բանաստեղծությունների ու պատմվածքների սոցիալական բողոքը—ուղղված տիրողների ու բռնության և իմպերիալիստական պատերազմի դեմ։ Արազին վորպես ռեալիստ արձակագիր (հատկա-

1107—3

պես նրա՝ հետհոկտեմբերյան շրջանի գրվածքները)։ Վերակառուցվող ինտելիգենտի տիպը Արազու յերկերում («Զրվեժի ցոլքում»)։ Արազու տիպերի հոգեբանական վերլուծումը։ Լեզուն, նկարագրությունները, տիպականությունը Արազու վիպակներում։

Նյութեր

Զրվեժի ցոլքում

3. Ա. Վշտունի։ Կենսագրական տեղեկություններ։ Անհատապաշտական տրամադրություններն ու թախիծը Վշտունու նախահեղափոխական շրջանի բանաստեղծություններում։ «Որիենտալիա» ժողովածուն վորպես Վշտունու հեղափոխական բանաստեղծությունների սկիզբը։ Իմպերիալիզմի դեմ արևելյան ժողովուրդների կողմից մղվող պայքարի արտացոլումը Վշտունու բանաստեղծություններում (Ռամ Ռոյ)։

Հեղափոխական առաջնորդների՝ ընկ. Լենինի և Ստալինի պատկերումը Վշտունու բանաստեղծություններում (Լենին, Ստալինի գորգանակարը)։ Մայիսյան ապստամբության դրսևորումը Վշտունու «Լուսադեմին» պոեմում։ Վշտունու լեզվի յերաժշտականությունը, հանգաշատությունը։ Եպիքական տարրերը «Լուսադեմին» պոեմում։

Նյութեր

Լենին
Ստալինի գորգանկարը
Լուսաբացին

4. Ս. Զորյան։ Կենսագրական տեղեկություններ։ Ճնշված ու անհեռանկար մարդկանց պատկերումը Զորյանի նախահեղափոխական շրջանի պատմվածքներում։ Հայաստանի խորհրդայնացումն ու մարդկանց վերակառուցումը Զորյանի կողմից իր հետհոկտեմբերյան շրջանի գործերում («Գրադարանի աղջիկը», «Հեղկոմի նախագահը» և այլն)։ Արդյունաբերությունը և քաղաքային շինարարությունը Զորյանի «Սպիտակ քաղաք» վեպում։ Զորյանի լեզվի պարզությունն ու գեղարվեստական առանձնահատկությունները։ Տիպերի բնականությունը։ Նովելլան վորպես Զորյանի հիմնական ժանրը և նրա նովելլաների կառուցվածքը։ Զորյանի լեզուն։

Նյութեր

Գրադարանի աղջիկը

5. Ն. Զարյան։ Կենսագրական տեղեկություններ։ Ն. Զարյանի սկզբնական շրջանի բանաստեղծությունները և Տերյանի ազդեցությունը նրանց վրա։ Քաղաքացիական լիրիկայի արտահայտությունները Զորյանի բանաստեղծություններում։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարի արտացոլումը «Ռուշանի քարափը» պոեմի մեջ, «Ռուշանի քարափ»-ի տիպերի վերլուծություն։ Ստալին բանաստեղծության վերլուծումը։ Ն. Զարյանի լեզուն, պատկերները, գործածած չափերը։

Ստալին
Ռուշանի քարափը

6. Դ. Դեմիրճյան։ Կենսագրական տեղեկություններ։ Դեմիրճյանի մինչհեղափոխության շրջանի գործերը։ Դեմիրճյանը վորպես խորհրդային դրամատուրգ («Բաջ Նազար»)։ Դեմիրճյանի պատմվածքները («Սարեթ») և վիպակները («Ռաշիդ»)։

Կոլտնտեսական գյուղի համար մղվող պայքարը Դեմիրճյանի «Ռաշիդ» վեպում։ «Ռաշիդ»-ի տիպերի վերլուծությունը։

Դ. Դեմիրճյանի լեզվի առանձնահատկությունները։

Ռաշիդ

7. Սիրաս։ Կենսագրական տեղեկություններ։ Հայաստանի քաղաքացիական կռիվների ու սոցիալիստական շինարարության դրվագները «Զգրված որենք» վեպում։ Հին ընտանիքի քաղքենիության և դասակարգային թշնամու մերկացումը «Զգրված որենք»-ում։ Տիպերի վերլուծությունը։

Սիրասի լեզուն։ Սիրասը վորպես ժողովրդական մոտիվներ մշակող (Մամեն ու Աշեն)։

Զգրված որենք

8. Դ. Սարյան։ Կենսագրական տեղեկություններ։ Սարյանի բանաստեղծությունները աշխատանքի և խորհրդային յերկրի մասին։ Արևելքի ճնշված կինը Սարյանի բանաստեղծություններում։ Սարյանի լեզուն, պատկերները։

Ցերդ հանքափորի
Քաղաքը
Բալլադ Խորհրդային Հայաստանի մասին
Տարեդարձի յերգը
Լուցկի

9. Մ. Մանվելյան։ Կենսագրական տեղեկություններ։ Մանվելյանի մինչհոկտեմբերյան շրջանի գրվածքների մանր բուրժուական եյությունը։ Մանվելյանի հետհոկտեմբերյան շրջանի պատմվածքների սոցիալական բովանդակությունը։ Նատուրալիզմի տարրերը Մ. Մանվելյանի գրվածքներում։ Կուլակը Մանվելյանի գրվածքներում (Աղա Խոսրով)։

10. Վ. Վաղարշյան։ «Ողկույզ» պիեսը վորպես քաղաքացիական կռիվներ արտացոլող գործ։ Ասլան ամու և Մելիքի տիպերի վերլուծությունը։ Դաշնակների դիմակազերծումը «Ողկում» պիեսի մեջ։

Ողկում

ՌՈՒՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր ակնարկ գրականության զարգացման ետապների

Մ. Գորկի։ Մ. Գորկու կյանքն ու գործունեությունը։ Գորկին վորպես պրոլետարական գրականության հիմնադիր և հեղափոխական պրոլետարիատի յերգիչ։ Ցարական կարգերի և բուրժուազիայի դիմակազերծումը Գորկու յերկերում։ Բանվորական հեղափոխական պայքարի նկարագիրն ու արտացոլումը Գորկու յերկերում։ «Մայրը» վեպի վերլուծությունը։ Լենինի և Ստալինի դերն ու ազդեցությունը Գորկու ստեղծագործական քաղաքական զարգացման նկատմամբ։ Գորկին վորպես Խորհրդային Գրողների Միության կազմակերպիչ։ Գորկու պայքարը իմպերիալիստական պատերազմի և ֆաշիզմի դեմ (հրապարակախոսական գրվածքները)։

Մայրը
Մրրկահավ
Ցեզոր Բուլըչով

Վ. Մայակովսկի։ Կենսագրական տեղեկություններ։ Մայակովսկին վորպես «Մեր եպոխայի մեծագույն բանաստեղծ» (Ստալին)։ Մայակովսկու մինչհոկտեմբերյան շրջանի բանաստեղծությունների խռովարար վոգին («Պատերազմ և խաղաղություն» պոեմը)։ Մայակովսկին վորպես հեղափոխության տրիբուն և ագիտատոր։ Մայակովսկին վորպես խորհրդային քաղաքական պոեզիայի ամենախոշոր ներկայացուցիչը։ Մայակովսկին վորպես սատիրիկ։ Մայակովսկու ռեալիզմը։ Մայակովսկին վորպես ռուսական նոր պոետիկական լեզվի հիմնադիր։

1917 թվի ապրիլին...
Անհաղթելի դենք

Տասնամյա յերգ
Պոմպադուր
Ցերկչոտը

Դ. Բեդնի. Կենսագրական տեղեկություններ։ Դ. Բեդնին վորպես բոլշևիկյան յերգիչ՝ նախահեղափոխական շրջանում։ Բեդնու բանաստեղծությունների, առակների նշանակությունը քաղաքացիական կռիվների և սոցիալիստական շինարարության ասպարիզում։ Բեդնին վորպես խորհրդային առակագիր։ Բեդնու լեզուն ու ժողովրդական վոճը։

Զինվորական յերգ *Կանանց բունտը*
Ցերդում

Շոլոխով։ Կենսագրական տեղեկություններ Շոլոխովը վորպես հետհոկտեմբերյան ռուսական արձակագրության խոշորագույն դեմքերից մեկը։ Իմպերիալիստական պատերազմի, սոցիալիստական Մեծ հեղափոխության և կոլտնտեսական շինարարության արտացոլումը Շոլոխովի վեպերում («Հանդարտ Դոն», «Հերկած խոպան»)։ Դավիդովի տիպի վերլուծությունը «Հերկած խոպանի» մեջ։ Մենատնտես գյուղացու հոգեբանության վերակառուցումը «Հերկած խոպան» վեպում։ Ինչպես ե ցույց տալիս Շոլոխովը ընկ. Ստալինի դերը կոլտնտեսական շարժման կազմակերպման մեջ։

Հերկած խոպան

Լեբեդեվ Կումաչ. Կենսագրական տեղեկություններ։ Կումաչը վորպես խորհրդային յերգի վարպետ։

Ոդային ծովերի կապիտան
Տրակտորիստի յերգը։

Ն. Ոստրովսկի։ Կենսագրական տեղեկություններ։ Ոստրովսկին վորպես Հոկտեմբերյան հեղափոխության պայքարներում աճած գրական սերնդի ներկայացուցիչ։ Ոստրովսկու «Ինչպես եր կոփվում պողպատը», «Փոթորկածիններ» վեպերը վորպես կոմունիստական յերիտասարդության հեղափոխական պայքարն ու հերոսությունը պատկերող լավագույն գործեր։ Կորչագինի տիպի, նրա բնավորության գծերի վերլուծությունը։

Ինչպես եր կոփվում պողպատը

Մ. Կոլցով։ Կոլցովի կենսագրությունը։ Կոլցովը վորպես գրող։ Կոլցովի գեղարվեստական ոչերկները։

Իսպանական տանկիստները։

Վ. Վիշնևսկի։ Վիշնևսկու կենսագրականը։ Վիշնևսկին որպես խորհրդային դրամատուրգ և ռեժիսոր։
Հայրենիքի համար

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ակնարկ [redacted]

Լորթիպանիձե. Կենսագրական տեղեկություններ։ Լորթիպանիձեն որպես խորհրդային արձակագիր։ Կոլտնտեսական շինարարությունը Լորթիպանիձեի յերկերում։
«Կորչի յեգիպտացորենի հանրապետությունը»

Ա. Մաշաշվիլի։ Կենսագրական տեղեկություններ։ Մաշաշվիլին որպես խորհրդային վրացական պրոլետարական պոեզիայի լավագույին ներկայացուցիչներից մեկը։ «Ուրմուլի» բանաստեղծության վերլուծումը։
Ուրմուլի

Գ. Տաբիձե։ Կենսագրական տեղեկություններ։ Տաբիձեյի ստեղծագործությունները նախախորհրդային շրջանում։ Հիմնական շրջադարձ դեպի պրոլետարիատ՝ խորհրդային իշխանության որով։ Խորհրդային հայրենիքն ու սոցիալիստական շինարարությունը Գ. Տաբիձեյի բանաստեղծություններում։
Մամուլ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զ. Զաբարլի։ Կենսագրական տեղեկություններ։ Զաբարլին որպես բանաստեղծ, դրամատուրգ և արձակագիր։ 1905 թիվը և հայ-թուրք ժողովուրդների յեղբայրությունը Զաբարլու գրվածքներում (1905 թ.), ադրբեջանցի կնոջ ազատագրումը («Սևիլ») և նոր Բագվի պատկերացումը («Փիրուզա») Զաբարլու յերկերում։ Փիրուզայի վերլուծումը։
Փիրուզա

Ս. Վուրղուն։ Կենսագրական տեղեկություններ։ Վուրղունը որպես ադրբեջանյան պրոլետարական գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկը։ Վուրղունը որպես խորհրդային քաղաքական պոեզիայի ներկայացուցիչ։ Վուրղունի

բանաստեղծությունները նվիրված սոցիալիստական շինարարությանն ու ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինին։
Յերջանկություն
Կովկաս

Ցանկա Կուպալա։ Կենսագրական տեղեկություններ։ Կուպալայի ստեղծագործության զարգացման ետապները. Կուպալան որպես Խորհրդային Բելոռուսիայի ժող. բանաստեղծ։
Նոր աշուն
Հուզված է ծովը

Լահութի։ Կենսագրական։ Արևելյան ժողովուրդների հեղափոխական պայքարը Լահութիի բանաստեղծություններում։
Կրեմլ
Գահ և թագ

Ս. Ավդալ։ Ակնարկ քրդական գրականության վրա։ Ավդալը քրդական գրավոր գրականության հիմնադիրներից մեկը։ Սոցիալիստական շինարարության արտացոլումը Ավդալի գրվածքներում։ Ժողովրդական բանահյուսության ազդեցությունը Ավդալի վրա։ Լեզվի և պատկերների պարզությունը։
Մեր արտը
Զամբիլ Ֆրոշ

Հ. Բարբյուս։ Կենսագրական։ Բարբյուսը որպես Յեվրոպայի հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչ։ Բարբյուսի «Կրակը»։ Լենինը «Կրակի» մասին։ Բարբյուսը որպես Խորհրդային Միության բարեկամ, կուլտուրայի պաշտպան և ֆաշիզմի դեմ պայքարող։
Կրակը

Ցոհ. Բեխեր։ Կենսագրական։ Բեխերը որպես գերմանական հեղափոխական պոեզիայի լավագույն ներկայացուցիչներից մեկը։ Բեխերը և Խորհրդային Միությունը («Հնգամյակ»)։ Բեխերը և գաղութային յերկրների հեղափոխությունը (Զապեյ)։
Զապեյ
Հնգամյակ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мравяна
Ա. ՄՐԱՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գլավլիտի լիազոր պ—4206 Պատվեր 1107, Հրատ. 4267, Տիրաժ 3000
Թուղթ 62×94. Տպ. 2 1/2 մամ. մամ. 38400 նիշ հեղ. 2 1/3 մամ.

Ցերեվան, Պետհրատի տպարան, Լենինի փող., № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0370805

ԳԻՆԸ 70 կ.

476

64.193

ПРОГРАММА

армянской литературы

для VIII, IX и X классов

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.